ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/8076-2024

«25 09»……2024թ.

«ՊՐԱՅԴ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՄՀԵՐ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ
(info@pride.am,mger.terteryan@gmail.com)

Հարգելի՛ պարոն Տերտերյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Պրայդ Սիսթեմս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00220237) միջև 2022 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-22/09» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել **«Փորձակոնստրուկտորական»** աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի՝ մինչև 30.02.2024 թվականը Կատարողի կողմից պետք է հանձնվեին երկրորդ փուլի, իսկ մինչև 30.05.2024թ.՝ երրորդ փուլի արդյունքները, որոնք մինչ օրս կատարված չեն (աշխատանքները՝ այդ թվում փուլային, պատվիրատուին չեն հանձնվել):

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում փորձակոնստրուկտորական աշխատանքների

կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2022 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-22/09» գնման պայմանագրի 2.1.5 կետի ա) և բ) ենթակետերը **2024 թվականի սեպտեմբերի 25-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:**

Տեղեկացնում ենք, որ «Պրայդ Սիսթեմս» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005570115» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 200,000,000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարը, տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 1,189,000 (մեկ միլիոն հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին, իսկ Պայմանագրով նախատեսված տույժերը՝ 12,242,563 (տասներկու միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով՝ վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Պայմանագրով նախատեսված տույժերի չափերն են.

2-րդ փուլ՝ 01.03.2024թ.-25.09.2024թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 142 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 10,673,863 (տասը միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ (150,336,100 x 0.05% x 142),

3-րդ փուլ՝ 30.05.2024թ.-25.09.2024թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 83 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 1,568,700 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ (37,800,000 x 0.05% x 83):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի

33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

9/25/2024

X

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GASPARYAN DAVIT 1407810154 **ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԳՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գնումների բաժին
010 59 00 47